ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1 Տեքստի ձևավորում

Գրիր կամ համացանցից վերցրու քո նախընտրած թեմայով մի փոքրիկ պատմություն:

Օրինակ՝ պատմություն այն մասին, թե ինչպիսի դպրոցում կցանկանայիր սովորել: Վերնագրիր այն «Իմ երազանքի դպրոցը»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Մտածիր, թե ինչ պիտի գրես քո պատմության տիտղոսաթերթի վրա (հեղինակ, վերնագիր, դպրոցի անվանում, համառոտ նկարագիր և այլն):

   Դասավորիր այդ տվյալները ըստ կարևորության՝ ամենակարևորից մինչև քիչ կարևորը:

   Այնուհետ դասավորիր դրանք էջի վրա օգտվելով օրինակից կամ մտածիր դասավորության քո տարբերակը:

   Օրինակ՝ ամենակարևորը էջի կենտրոնում և խոշոր, հետո մյուս տվյալը՝ մի քիչ փոքր և էջի վերին մասում, մյուս տվյալները էջի ներքևում և փոքր չափի:

   - Վերնագիր (ամենակարևորը)
   - Հեղինակ (հաջորդ կարևոր տվյալը)
   - Համառոտ նկարագիր (մեկ նախադասությամբ, թե ինչի մասին է պատմությունը)

     Քանի, որ սա վերնագրի բացատրությունն է կարող է գրվել վերնագրի տակ, բայց փոքր չափի
   - Դպրոց (որտեղ սովորում է հեղինակը)

     Քանի որ սա հեղինակի մասին է, կարող է գրվել հեղինակի անվան մոտ, բայց ավելի փոքր, որ հեղինակի անունը ավելի ցայտուն լինի:

2. Ընտրիր պատմությունը ձևավորելու ոճ. ինչպես պիտի առանձնացվեն պարբերությունները (դրանց միջև տարածությամբ, առաջին տողը խորքից և այլն), երթավերնագրերը (գույնով, չափով և այլն):

   Ընտրիր նկարներ, որոնք պիտի տեղադրես քո պատմության մեջ, որոշիր դրանց տեղը:

3. «WORD» միջավայրում ստեղծիր նոր ֆայլ և այնտեղ գրիր քո պատմությունը: էջը սահմանիր A4 չափի, ուղղահայաց, ամեն կողմից 2սմ լուսանցքներով:
4. Ձևավորիր տիտղոսաթերթը: Օգտվիր տրված նմուշներից կամ մտածիր քո տարբերակը:





5. Առաջին էջում գրիր ենթավերնագրերի ցանկը:
   - Ինչեր են սովորեցնում իմ երազանքի դպրոցում
   - Դասասենյակները, մարզասրահը, դահլիճն ու ճաշարանը
   - Նոր ու հետաքրքիր սենյակներ
   - Ուսուցիչները և նրանց անցկացրած դասերը
   - Ինչ նոր ու հետաքրքիր բարներ կան այս դպրոցում

   Օգտվիր տրված նմուշներից կամ մտածիր քո տարբերակը:





6. Պատմության համար օգտագործիր առնվազն 2 տառատեսակ՝ ենթավերնագրերի և բուն տեքստի համար: Նոր պարբերությունները գիրի մի փոքր խորքից: Հավասարեցրու տեքստը աջից և ձախից միաժամանակ: Համարակալիր էջերը:
7. Համացանցից գտիր քո պատմության առանձին դրվագները բնութագրող նկարներ և տեղադրիր համապատասխան տեքստի մոտ: Տեղադրիր փոքր նկարները տեքստի

աջ կամ ձախ կողմերում: Մեծ նկարները տեղադրիր տեքստի ներքևում (տես նմուշները):

Դասասենյակները

Դասասենյակում յուրաքանչյուրս իր գրասեղանն ունի: Աթոռները շատ հարմարավետ են: Գրասեղանները տեղադրված են այնպես, որ ցանկացածի մոտ նստելիս պարզ երևում է գրատախտակը:

Բոլորս ուշադիր լսում ենք ուսուցչին և նշումներ անում մեր տետրերում:

Կան դասասենյակներ, որտեղ մեծ շրջանաձև գրասեղան է դրված: Մենք նստում ենք գրասեղանի շուրջը, իսկ ուսուցիչը՝ կենտրոնում:

Նա հերթով օգնում է յուրաքանչյուրիս կատարել աշխատանքը:



Մարզասրահը

Ես շատ եմ սիրում մեր մարզասրահը: Այն ընդարձակ է և լուսավոր: Այստեղ մենք մարզվում ենք, սպորտային խաղեր խաղում:

8. Պահպանիր ֆայլը համակարգչի հիշողության մեջ կամ որևէ արտաքին կրիչի վրա:

2 Աղյուսակ

Շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում տեքստը ներկայացնել աղյուսակի տեսքով՝ տողերով և սյուներով:

Օրինակ՝ պատկերացրու, որ ռեստորան ունես և անհրաժեշտ է կազմել մենյու հաճախորդներին ներկայացնելու համար: Դրա ներկայացման լավագույն ձևը աղյուսակն է: Մտածիր ճաշացանկ, և ձևավորիր այն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմիր մենյուն թղթի վրա:

   Որոշիր, թե ինչ տվյալներ պիտի այն պարունակի.

   - ճաշատեսակների համար (անվանում, նկար, գին, բաղադրություն և այլն)
   - ռեստորանի մասին (անուն, տարբերանշան, հասցե, հեռախոս և այլն)

   Որոշիր էջի ձևավորումը (որ տվյալը, էջի որ մասում պիտի լինի)

   Ճաշացանկը ներկայացրու աղյուսակով, որպեսզի լինի հեշտ ընթեռնելի:

   Մտածիր այնպիսի ձևավորում, որը մենյուն կդարձնի գրավիչ:

2. «WORD» միջավայրում ստեղծիր նոր ֆայլ: էջը սահմանիր A5 չափի, ուղղահայաց, ամեն կողմից 1սմ լուսանցքներով:
3. Էջի վրա ավելացրու 2 սյունից բաղկացած աղյուսակ, և լրացրու ճաշացանկը. առաջին սյունակում ուտեստի անվանումը, երկրորդում՝ արժեքը:

4. Ձևավորիր աղյուսակը տարբեր ձևերի և գույնների եզրագծերով: Ընտրիր գեղեցիկ տառատեսակ և գունավորիր տառերը: Օգտվիր տրված նմուշներից կամ մտածիր քո տարբերակը:

Աղցան	500դր
Պիցցա	1000դր
Ապուր	700դր
Կարկանդակ	400դր
Հյութ	300դր
Թեյ	200դր

Աղցան	500դր
Պիցցա	1000դր
Ապուր	700դր
Կարկանդակ	400դր
Հյութ	300դր
Թեյ	200դր

Աղցան	500դր
Պիցցա	1000դր
Ապուր	700դր
Կարկանդակ	400դր
Հյութ	300դր
Թեյ	200դր

5. Մենյուի յուրաքանչյուր էջի համար ավելացրու ռեստորանի անվանումը վերևում, և էլեկտրոնային փոստի հասցեն ու հեռախոսահամարը՝ ներքևում:

   Օգտվիր էջի համար գլխագիր և ստորագիր (Header/Footer) ավելացնելու գործիքներից:

6. Աղյուսակի սկզբում կամ վերջում ավելացրու նոր սյուն ճաշատեսակների նկարները տեղադրելու համար:

7. Պահպանիր ֆայլը համակարգչի հիշողության մեջ կամ որևէ արտաքին կրիչի վրա:

3 Բուկլետ

Բուկլետը սովորաբար 2 կամ 3 մասի ծալված թերթիկ է, որը նախատեսված է ապրանքի, իրադարձության կամ որևէ այլ բանի մասին տեղեկացնելու համար:

Օրինակ՝ դա կարող է լինել լինել զբոսաշրջիկների համար նախատեսված մի թերթիկ, որը ներկայացնում է քո բնակավայրի դիտարժան վայրերը և կուղղոդում նրանց: Այդպիսի բուկլետը կարելի է անվանել «Ճամփորդական ուղեցույց» կամ «Իմ երկիրը»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Նախքան բուկլետը ձևավորելը, պետք է որոշել, թե ինչ պիտի պարունակի այն: Դրան համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին:

   ա. Ո՞րն է բուկլետի նպատակը: Ինչ եմ ուզում այս բուկլետով ասել մարդկանց:

   Օրինակ՝ Ես ուզում եմ, որ զբոսաշրջիկները իմանան իմ բնակավայրի դիտարժան տեղերի մասին և այլցելեն:

   բ. Ու՞մ համար է նախատեսված բուկլետը: Այս հարցը կօգնի հասկանալ, թե ինչ տեղեկություն պիտի պարունակի բուկլետը, որ օգտակար լինի:

   Օրինակ՝ Տեսարժան վայրի նկարագիրը, պատմությունը, նկարները, այն գտնելու ճանապարհը, կայքերի հղումները, որոնք ավելի մանրակրկիտ տեղեկություն են պարունակում:

2. Կազմիր էջի պլանը:

   Որոշիր տեքստերն ու նկարները, որոնք պիտի տեղադրես բուկլետում: Տեքստերը պիտի լինեն հակիրճ և գրավիչ:

   Սովորաբար բուկլետը լինում է 2 կամ 3 մասի ծալված:

   Ծալված վիճակում դիմացի էջը պիտի նմանվի տիտղոսաթերթի. լինի բնակավայրի անվանումը, այնտեղ հրավիրող մի նախադասություն, բնակավայրը բնութագրող նկար կամ տարբերանշան:

   Բուկլետի հետևի մասում տեղադրիր ընդհանուր տեղեկություններ, հասցե, քարտեզ, կայքերի հղումներ:

   Բուկլետի ներսում կարող ես տեղադրել տեղեկություններ տեսարժան վայրերի մասին:



ներսի կողմը



արտաքին կողմը

3. «WORD» միջավայրում ստեղծիր նոր ֆայլ: Էջը սահմանիր A4 չափի, հորիզոնական դիրքով և շատ նեղ լուսանցքներով (նվազագույնը, որը թույլ կտա քո համակարգիչը):
4. Էջը բաժանիր 3 սյան:
5. Տեղադրիր քո պատրաստած նյութերը:
   — Անվանումների համար օգտագործիր WordArt՝ դրանք ձևավոր գրելու համար: Ընտրիր տեքստի ձևավորման ոճը:

   Օրինակ

   — Տեքստերի համար օգտագործիր TextBox, որպեսզի կարողանաս այն զետեղել էջի ցանկացած մասում:
6. Պահպանիր ֆայլը համակարգչի հիշողության մեջ կամ որևէ արտաքին կրիչի վրա:

4 Պաստառ (պլակատ)

Պաստառի նպատակը որևէ իրադարձություն կամ ապրանք գովազդելն է: Այն նկարից բացի պիտի պարունակի փոքր տեքստ կամ կարճ կարգախոս: Պաստառը պետք է տեսանելի լինի հեռվից, լինի հասկանալի և լավ ընկալելի դիտողի համար:

Օրինակ՝ Դպրոցում կազմակերպվող միջոցառման մասին բոլորին տեղեկացնելու և հրավիրելու ազդեցիկ տարբերակներից մեկը կարող է լինել դպրոցի պատին փակցված պաստառը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Նախքան պաստառը ձևավորելը, որոշիր այն նկարը կամ նկարները, որ պիտի տեղադրվի պաստառի վրա:

   Օրիակ՝ Միջոցառման տարբերանշանը, որևէ դրվագ միջոցառումից կամ միջոցառման մասնակիցների խմբակային լուսանկարը:

   Որոշիր, թե ինչ տեքստ պիտի գրվի պաստառի վրի: Տեքտը պիտի լինի կարճ, գրավիչ և տա անհրաժշտ տեղեկություն:

   Օրիակ՝ Միջոցառման անվանումը, կարգախոսը, անցկացման օրը, ժամն ու տեղը:

2. Դասավորիր տեղեկությունը էջի վրա:

   Սկզբում տեղադրիր նկարները, այնուհետև տեքսը: Հիշիր, տեքստը պիտի լինի հեռվից տեսանելի և ընթեռնելի:

3. «WORD» միջավայրում ստեղծիր նոր ֆայլ: Էջը սահմանիր A3 չափի և շատ նեղ լուսանցքներով (նվազագույնը, որը թույլ կտա քո համակարգիչը):

4. Տեղադրիր քո պատրաստած նյութերը:

   Տեքստերի և նկարների համար օգտագործիր տարբեր օբյեկտներ՝ դրանք ձևավորելու համար:

   Օրինակ՝

5. Պահպանիր ֆայլը համակարգչի հիշողության մեջ կամ որևէ արտաքին կրիչի վրա: